**Հմր. 118-2023**

*ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի ղեկավար՝*
*Վահագն Արսենյանին*

Հարգելի պարոն Արսենյան,

«Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն, Եվրահանձնաժողովի Եվրոպական քաղաքացիական պաշտպանության և հումանիտար օգնության վարչության (ECHO), “Start” և “Club of Friends” հիմնադրամների ֆինանսավորմամբ 2021-2023թթ. ընթացքում Հայաստանի Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում իրականացրել է հումանիտար և զարգացման ծրագրեր ուղղված 2020թ. Արցախյան պատերազմից և 2022թ. սեպտեմբերյան հարձակումից տուժած համայնքների կարիքներին և խոցելի բնակչության օժանդակությանը:

Շահառուների ցանկերը ներկայացվել են Ջերմուկի համայնքապետարանի և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից: Ցանկերի մի մասը հավելյալ քննարկվել է եռակողմ կոմիտեներում (համայնքապետարան-ՄՍԾ-գյուղապետարաններ): Մասնավորապես, նշված ծրագրերի շրջանակում Ջերմուկ համայնքում 2021-2023թթ. իրականցվել են հետևյալ ծրագրային գործողությունները:

- 175 ընտանիք ստացել է կումունալ վճարների փոխհատուցման աջակցություն ձմեռային ամիսների համար՝ միջինում 88,000 ՀՀ դրամի չափով,
- 8 ընտանիք ստացել է բրիկետներ՝ միջինում 0.5 տոննայի չափով:
- 151 ընտանիք ստացել է կանխիկ աջակցություն՝ 60,000 ՀՀ դրամի չափով:
- 23 ընտանիք ստացել է մանկական պարագաների փաթեթներ՝ 40,000 ՀՀ դրամ արժեքով:
- 45 ընտանիք ստացել է առաջին օգնության փաթեթներ:
- Ավելի քան 110 շահառու մասնակցել է մասնագիտական դասընթացների (Հրուշակագործություն, Կարուձև, Մեղվապահություն, Հաշվապահություն, Ուսուցիչների մասնագիտական վերապատրաստում, և այլ թեմաներով), մասնակիցների մոտ 70%-ը ստացել է համապատասխան մասնագտական գործիքներ /ջեռոց, կարի մեքենա, մեղվափեթակ, և այլն/:

Նման ծրագրային արդյունքներն անհնարին կլինեին առանց Ջերմուկի համայնքապետարանի հետ սերտ համագործակցության, որի համար հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

Նշված ծրագրերը ներկայումս ավարտված են: Դրանց, ինչպես նաև հետագա հումանիտար ծրագրերի հետ կապված ցանկացած հարցերով խնդրում ենք դիմել ՄԿՄ ներկայացուցիչ Մարնի Անջաօղլյանին, հեռ.՝ 044 688700, էլ. փոստ՝ marni.anjaoghlian@pinf.cz :

Հարգանքով՝
Անի Մանուկյան
Ծրագրերի ղեկավար
«Մարդը կարիքի մեջ» ՀԿ
31.03.2023թ.

Ani Manukyan
Digitally signed by Ani Manukyan
Date: 2023.03.31 13:38:38 +04'00'

People in Need
25, Aygedzor
Yerevan, Armenia

(+374) 60 51 91 59
info.armenia@peopleinneed.net
armenia.peopleinneed.net

member of Alliance 2015
towards the eradication of poverty